ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց

Չորրորդ դասարան

Հարությունյան Վարդենիկ

2022-2023 ուստարի

Արտգրված է
ԿԳԿԳ-ի հրամանով
Դ.Ասլանյան Հ. Գրիգորյան
05.09.2022թ.

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ_---3_րդ դասարանում սովորում են 27աշակերտ՝ 13աղջիկ և 14տղա: Բոլոր աշակերտները ֆիզիկապես և հոգեպես առողջ են,ակտիվորեն մասնակցում են բոլոր դասաժամերին:Կան թույլ ընդունակություններ ունեցող աշակերտներ և պետք է հասնել նրան,որ վերջիններս գոնե բավարարեն առարկայական չափորոշիչների առաջին մակարդակը,լինեն կազապահ,ճանաչեն իրենց իրավունքներն ու պարտականությունները;

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

•Անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ

•Բարձրացնել ուսման որակը,ակտիվացնել ուս.գործընթացը

•Երեխաների մեջ ձևավորել դրական վերաբերմունք հանձնարարությունների նկատմամբ՝օգտագործելով ծնողկոմիտեի ներուժը

•Տարվա ընթացքում կազմակերպել ուսումնական խաղեր,անցկացնել լավագույն աշխատանքների մրցույթ,կազմակերպել բեմական ընթերցումներ,դերախաղեր

•Կազմակերպել նաև բնապահպանական աշխատանքներ դպրոցում,առաջացնել հետաքրքրություն շրջապատի նկատմամբ

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1- Հոգևոր դաստիարակություն

Եկեղեցին և նրա դերը հայ ժողովրդի կյանքում:Քրիստոնեության մուտքը Հայաստան:

Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի հոգևոր մշակույթային կենտրոններ:Ծանոթացնել մեր ազգային սովորույթներին ու ծեսերին,ազգային տարազներին:

3.2- Գեղագիտական դաստիարակություն

Օգնել երեխաներին տեսնել գեղեցիկը,գնահատել վեհը:Այցելել թանգարաններ,թատրոն,պատկերասրահ:Անցկացնել էքսկուրսիա բնության գրկում,կազմակերպել զրույցներ,դիտումներ,նկարել շրջակա բնությունը,հորինել ոտանավորներ ու երգեր:

3.3- Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

4 Ներկայացնել մեր հայրենիքի անցյալն ու ներկան,նրա անցած մաքառման ուղիները:Սովորեցնել ռազմա-հայրենասիրական երգեր,ընթերցել ստեղծագործություններ:Նամակներ գրել զինվորներին:

3.4 - Ֆիզիկական դաստիարակություն

Երեխաներին ծանոթացնել <<Առողջ մարմնում առողջ հոգի>>կարգախոսին:Երեխան պետք է ունենա առողջ կենսակերպ,մաքուր կենցաղ,հիգենա:

Սովորեցնել սպորտային և ազգային ոճի խաղեր,անցկացնել մրցույթներ:

3.5 - Աշխատանքային դաստիարակություն

<<Մարդու գործն է անմահ>>թեմայով զրույց: Ձևավորել դասասենյակը,բակը մաքուր պահելու գիտակցություն:Ունենալ հարգալից վերաբերմունք մեծահասակների և նրանց աշխատանքի հանդեպ:

3.6- Բնապահպանական դաստիարակություն

Մարդը բնության միակ մտածող էակն է:Խնայողաբար օգտագործել բնության բարիքները:Կատարել ծառատնկում,պահպանել կանաչ տարածքները,աճեցնել ծաղիկներ դպրոցամերձ տարածքում և դասարանում՝ստեղծելով կանաչ անկյուն:

4 –ԴՊՐՈՑ_ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Սերտ կապ հաստատել ծնողների հետ:Անցկացնել ծնողական ժողովներ,ծնողների օգնությամբ լուծել դասարանում առաջացած խնդիրները:Օգնել անապահով ընտանիքի երեխաներին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1-ին շաբաթ---Անցկացնել ծնողական ժողովներ,ընտրել ծնողկոմիտե:

Ծնողներին ներգրավել դասարանական աշխատանքներում

Օգնել ծնողին երեխայի ճիշտ դաստիարակության և ուսուցման գործընթացում

2-րդ շաբաթ---Դասարանում նշանակել ավագ,սանիտար և կարգել հնգօրյա հերթապահություն

3-րդ շաբաթ---Զրույց՝<<Ո՞վ է իմ ընկերը>>

4-րդ շաբաթ---Բանավեճ՝<<Ես գիտեմ իմ իրավունքներն ու պարտականությունները>> դպրոցում և տանը

5-րդ շաբաթ---Էքսկուրսիա դեպի <<Մեծ աղբյուր>>: Հավաքել խոտաբույսեր և ծաղիկներ

6-րդ շաբաթ---Երաժշտական ժամանց

7-րդ շաբաթ---Տանը և տեխնոլոգիայի ժամերին պատրաստած աշխատանքների ցուցադրում

8-րդ շաբաթ---Ինչ անել վտանգավոր իրավիճակներում

9-րդ շաբաթ---Զրույց՝<<Ես Հայաստանի քաղաքացի եմ>>թեմայի շուրջ

10-րդ շաբաթ---Ձևավորել դրական վերաբերմունք ուս. հանձնարարությունների նկատմամբ

11-րդ շաբաթ---Տաղավար տոները և դրանց նշանակությունները

12-րդ շաբաթ---Կանխել անհարկի բացակայությունները

13-րդ շաբաթ---Կազմակերպել ուսումնական խաղեր,մրցույթներ,ընթերցել հեքիաթներ,պատմվածքներ

14-րդ շաբաթ---Զրույց՝<<Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն>>թեմայի շուրջ

15-րդ շաբաթ---ՀՀ-ն ատրիբուտներ՝դրոշ,հիմն,զինանշան

16-րդ շաբաթ---Անցկացնել խաղ-մրցույթ՝<<Հեքիաթների աշխարհում>>

17-րդ շաբաթ---Դաստիարակել քաղաքավարություն,ազնվություն,մաքրություն

18-րդ շաբաթ---Հարգալից վերաբերմունք ունենալ շրջապատի մարդկանց,ընկերներին ու ընտանիքի հանդեպ

19-րդ շաբաթ---Զրույց՝<<Առողջ մարմնում առողջ հոգի>>թեմայով

20-րդ շաբաթ---Կազմակերպել և անցկացնել ազգային բնույթի խաղեր

21-րդ շաբաթ---Կատարել սպորտային մրցույթների դիտում,հետաքրքրություն առաջացնել սպորտաձևերի նկատմամբ

22-րդ շաբաթ---Զրույց՝<<Աշխատանքն է բարիք բերում>>թեմայով

23-րդ շաբաթ---Օգնել ավագ դպրոցականներին շրջապատում մաքրություն և կարգապահություն պահպանելիս

24-րդ շաբաթ---Պատմել<<Իմ փոքրիկ այգին>>թեմայի շուրջ

25-րդ շաբաթ---Բանավեճ<<Ի՞նչ կենդանիներ կան իմ հայրենիքում>>:Անցկացնել կինոդիտում

26-րդ շաբաթ—Զրույց՝<<Բնության երևույթները>>թեմայի շուրջ

27-րդ շաբաթ---Կատարել ծառատնկում դպրոցամերձ հողամասում,ջրել տնկած ծառերը

28-րդ շաբաթ---Հետևել կանաչապատված տարածքների պահպանմա

29-րդ շաբաթ---Ուսումնասիրել<<Մանկական Աստվածաշունչը>>,ընթերցել որոշ պարբերություններ

30-րդ շաբաթ---Կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա եկեղեցի

31-րդ շաբաթ---Ազգային տոն՝<<Զատիկ>>

32-րդ շաբաթ—Ռազմա-հայրենասիրական երգերի ուսուցում և ունկնդրում